

**ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ «ԴԻԳԵՆԻՍ ԱԿՐԻՏԱՍ» ՎԻՊԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Հ. Մ. ԲԱՐԹԵԿՅԱՆ

1874 թվականին հայագիտության մեջ և 1875 թվականին՝ բյուզանդագիտության մեջ սկսեց ուսումնասիրվել վիպերգությունը: 1874 Յ. Գ. Սրվանձտյանցը հրատարակեց «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին տարբերակը¹, իսկ 1875 թ. բյուզանդագետներ Սաթանու և Լեզրանը հրատարակեցին բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» վիպերգությունը XVI դարի մի նորահայտ ձևագրից²: Երկու վիպերգություններն էլ, որոնք վերաբերում են միևնույն ժամանակաշրջանին ու աշխարհագրական տեղակետից շատ մոտիկ միջավայրին և ունեն մերձեցման բազմաթիվ կետեր, շուտով դարձան մանրակրկիտ և խոր ուսումնասիրության առարկա: Բյուզանդագետները տվյալ դեպքում դառնում էին շատ ավելի նպաստավոր պայմաններում: Բյուզանդական վիպերգությունը նրանց հասավ գոի առնված վիճակում, միջնադարյան ձևագրերում, մինչդեռ «Սասունցի Դավիթ» էպոսը հայագետներին հասավ մեր ժամանակաշրջանի հայ աշխատավոր գյուղացիների շրթներում, հանդամանք, որ չէր կարող այս կամ այն չափով չանդրադառնալ վիպերգության սկզբնական բովանդակության վրա: Բայց այս հանդամանքը միաժամանակ ունեցավ իր դրական նշանակությունը այն իմաստով, որ ինչպես պարզվեց, աշխատավոր ասպետները պահպանել էին վիպերգության ժողովրդական բնույթը, իսկ «Դիգենիս Ակրիտաս» գրի առնող գրագետ-վանականը միտ չէ, որ ձգտել է այդ բանին: Եվ հենց այդ է հիմնական պատճառը, որ բյուզանդական վիպերգության բնույթի շուրջը ասուջացել է մեծ վեճ՝ ժողովրդական է այն, թե ստեղծվել է ֆեոդալական շրջաններում, ինչ, որ դեռ չի լուծվել: Մինչև օրս հայտնաբերվել են «Դիգենիս Ակրիտաս» վիպերգության հինգ չափածո (Գրոտտա-Ֆերրատայի, Տրապիզոնի, Անդրուսի, Էսկուրիալը և Օբսֆորդի) և մեկ արձակ (նույնպես Անդրուսի) տարբերակներ: Միջնադարում, XII—XIII դդ. բյուզանդական վիպերգությունը թրգմանվել է նաև սուսերեն և մեզ է հասել «Девгениево деяние» անվան տակ³:

¹ Գ. Սրվանձտյանց, Դրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874:

² „Les exploits de Basile Digenis Akritas“, eposée byzantine du dixieme siecle, publ. par C. Sathas et E. Legrand, Paris, 1875. Հնագույն տարբերակը դառնում է Գրոտտա-Ֆերրատայի մատենադարանի XIV դարի մի ձևագրում: Վերջին անգամ այն հրատարակել է Մավրոգորգատուն, ղուգահեռ տալով նրա անդլերեն թարգմանությունը: Տե՛ս „Digenes Akrites, Edited with an Introduction, Translation and Commentary by J. Mavrogordato“, Oxford, 1956.

³ Թարգմանությանը որպես բնագիր ծառայած օրինակը ավելի հին է քան թե մեզ հասած՝ բոլոր հունարեն տարբերակները և վիպերգության ժողովրդական բնույթը նրա մեջ ավելի է քննդգծված: Տե՛ս М. Сперанский, Девгениево деяние. К истории его текста в старинной русской письменности. Исследование и тексты. Сборник отделения русского языка и словесности АН СССР, т. 99, № 7, Петроград, 1922. Ունի ֆրանսերեն թարգմանություն: Տե՛ս P. Pascal, Le „Digenis“ slave, Byzantion, t. X (1935) fasc. 1, էջ 301—334: Նրա բնույթի մասին տե՛ս H. Gregoire, Note sur le Digenis slave, Byzantion, t. X (1935), էջ 335—339: Նույնի՝ 'Ο Δεγενίης 'Ακριτας, 'Η Βυζαντινή εποποιία στὴν ἱστορία καὶ στὴ ποίησιν, New York, 1942, В. Д. Кузьмина, Новый список „Девгениева деяния“, Труды отдела древнерусской литературы, IX, 1953, էջ 339—360: Նույնի՝ Девгениево деяние (Деяния прежних времен храбрых человек), Москва, 1962.

«Դիգենիս Ակրիտաս» վիպերգությունը դժբախտաբար գրեթե անծանոթ է մնացել հայագետներին⁴, հատկապես հայկական էպոսով զբաղվող մասնագետներին, թեև Ն. Ադոնցը բյուզանդական և հայկական էպոսների հարցին առավել քան մեկ երեսնամյակ առաջ նվիրել է իր արժեքավոր ուսումնասիրություններից մեկը⁵:

Սույն հոդվածի նպատակը շատ համեմատ է՝ հայ ընթերցողներին համառոտակի ծանոթացնել «Դիգենիս Ակրիտասի» բովանդակությանը: Դրանով իսկ պարզ կդառնա, որ բյուզանդական վիպերգությունը կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն Բյուզանդիայի, այլև Հայաստանի պատմության ու գրականության ուսումնասիրության համար բնագահնապես և «Սասունցի Դավիթ» էպոսի ուսումնասիրության համար՝ մասնավորապես:

Նախ և առաջ նշենք, որ բյուզանդական վիպերգությունը կազմավորվել է X դարում և արտացոլում է IX—X դարերի բյուզանդա-արաբական պայքարը:

«Դիգենիս Ակրիտաս» վիպերգությունն սկսվում է համառոտ նախերգանքով, ուր ասվում է, թե երգվելու են Վասիլ Դիգենիս Ակրիտասի քաջագործությունները, այն հերոսի, որն իրեն ենթարկեց ամբողջ Ասորիքը, Բարեկոնքը, Խարսիանոն, գրավեց Հայաստանը, Կապադովկիան, Ամորիոնը, Իկոնիոնը, Անկյուրան և Ջմյուտնիան⁶: Այնուհետև խոսվում է այն մասին, որ եղևնիայի (վիպերգության մեջ այն կոչվում է Ռուխա կամ Ռախա, այն է՝ հայոց Ուռհան⁷) ամիրան, որն Անդրոսի և Էսկուրիայի տարրերակներում կոչվում է Մուսուր, իր զորքերի գլուխն անցած արշավանքի է դուրս գալիս Բյուզանդիայի դեմ, հասնում է Հերակլիա (այժմ՝ Էրեղլի, Կիրիկիայից Կոնիա տանող ճանապարհի վրա), ավերում է Խարսիանոն թեման և հասնում

⁴ Պետր է ասել, որ նրանով չեն զբաղվել նաև ուրիշ բյուզանդագետները: Վերջերս միայն Ա. Յա. Սիրկինն է, որ հանդես եկավ բյուզանդական վիպերգությանը նվիրված հոդվածներով: Նա հրատարակեց նաև Դիգենիս Ակրիտասի Գրոտտա-Ֆերրատայի տարրերակի ոտաներն թարգմանությունը: Տե՛ս Ա. Я. Сыркин, *гравитационный Digenis Akrites*, ed. by J. Mavrogordato *գրքի*, «Виз. Временник», հատ. XII, 1957, էջ 340—347, նույնի՝ К истории изучения «Дигениса Акрита», «Византийский Временник», т. XVII, 1960, էջ 203—226, Об историчности персонажей «Дигениса Акрита», «Виз. Временник», т. XVIII, 1961, էջ 124—149, Некоторые проблемы византийского эпоса, «Виз. Временник», т. XIX, 1961, էջ 97—119; Социально-политические идеи эпоса о Дигенисе, «Виз. Временник», т. XX, 1961, էջ 129—155; Дигенис Акрит», перевод, статьи и комментарии А. Я. Сыркина, Москва, 1960; «Поэма о Дигенисе Акрите как исторический источник», Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 1962. Сведения «Дигениса Акрита» о византийском быте и памятниках материальной культуры, «Виз. Временник», т. XXI, 1962, էջ 148—164:

⁵ N. Adontz, *Les fondements historiques de l'épopée byzantine Digenis Akritas*, Byzantinische Zeitschrift, Bd. XXIX—XXX, 1929—1930, էջ 198—227: Այդ հարցին անդրադարձել է նաև Ա. Վ. Բանկը: Տե՛ս նրա *Дигенис Акрит византийского эпоса и Давид Сасунский*, «Давид Сасунский, Юбилейный сборник, посвященный 1000-летию эпоса», Ереван, 1939, էջ 141—147: Այս հոդվածը հրատարակվել է նաև հայերեն: Տե՛ս «Սասունցի Դավիթ», հորեկրանական ժողովածու, նվիրված էպոսի 1000-ամյակին», Երևան, 1939, էջ 103—109:

⁶ Այս քաջագործությունները վիպերգության մեջ վերադրվում են նաև Դիգենիսի հորը և իր մորեղբորը:

⁷ XIX դարի հայերեն ձեռագիր մի բառարանում (Մատենադարան, ձեռ. № 8189, էջ 174ր), որը, հնարավոր է, ավելի վաղ ձեռագրից արտագրված լինի, մենք հանդիպում ենք տվյալ հարցի համար շատ հետաքրքրական մի փաստի: Այնտեղ գրված է. «Արրիտայ. Օրհայ քաղաքն»: Արաբական աղբյուրներում Ջեզիրե-Միջագետքը կոչվում էր նաև Արուր, մի բառ, որ արաբագետները մինչև օրս չեն ստուգաբանել (հմտ. G. Le Strange, *The Lands of the Eastern Caliphate*, Cambridge, 1930, էջ 86): Թվում է, թե մենք գործ ունենք բյուզանդական շրջանի Ակրա բառի հետ, որ նշանակում է սահման (Ակրիտաս էլ նշանակում է սահմանապահ): Ջեզիրե-Արուրը բնորոշվում էր հենց Աղձնիքն ու ասորոց Միջագետքը, որի կենտրոնն էր եղևնիան՝ Ուռհան: Սակայն ավելի հավանական է, որ սեմական Արուր տեղանունը բյուզանդացիների կողմից իմաստավորվել է՝ քաջ-սահմաններ: «Արուրի» վրա մեր ուղադրությունը հրավիրեց Ա. Տեր-Ղևոնդյանը:

Վաղագրավիպ, ուվարառում այն ու վերադառնում իր երկիրը Ավարի մեջ էր նաև մի աղջիկ՝ Իրինա անունով, հայտնի ազնվականների դուստրը Ասեանգված աղջկա հինգ եղբայրները, յեղի տալով իրենց մոր թախանձանքներին, գնում են ամիրայի մոտ՝ փրկելու համար իրենց բոլոր Ամիրան նրանց առաջարկում է մենամարտել իր հետ, եթե իներ հաղթող դուրս գա, ապա հինգ եղբայրները կդառնան իր սուրակները, իսկ եթե պարտվի, ապա նրանց կվերադարձնի իրենց բոլոր Ամիրայի հետ մենամարտի է դուրս գալիս ամենակրտսեր եղբայրը Կոստանդինը և հաղթում ամիրային: Դրանից հետո ամիրան հարցնում է հինգ եղբայրներին, թե ովքեր են նրանք, որ թեմայում են բնակվում: Եղբայրները պատասխանում են.

Մենք Անատոլիոնի (թեմայից ենք), ազնվական հոռոմներից,
Մեր հայրը ծագում է Կիննամաղների տոհմից,
Իսկ մեր մայրը՝ Դուկասների, Կոստանդինի սերունդներից⁸:

Այն այլ տեղում հիշատակվում է հոր անունը, Կիննամաղների տոհմից Անտակինոս, որը քստ Ն. Ագոնցի Անտիոր անվան արևելյան ձևն է, հայերեն՝ Անտոկ⁹:

Տրապիզոնի տարբերակում վերոհիշյալ մասը այլ կերպ է շարադրված: Աղջկա եղբայրները ասում են ամիրային.

Մենք Անատոլիոնից ենք ազնվական ծնողներից,
Մեր հայրը Ահարոնն էր, Դուկասների տոհմից,
Նշանավոր Կիննամաղներից:
Մեր հոր հայրը նշանավոր Մուսելումն էր,
Իսկ մայրը ծագում էր Կիրմադիտորոսների
Հարուստ տոհմից¹⁰:

Օքսֆորդի տարբերակում Ահարոնի փոխարեն կարդացվում է Անդրոնիկոս:

Իր հերթին ամիրան, որ վիպերգության մեջ կոչվում է ամենամեծ ամիրա, առաջինը Ասորիքում, պատմում է իր ծագման մասին.

Ես Խրիստերգի¹¹ որդին եմ, իսկ մայրս կոչվում էր Պանթիա¹²:
Իմ պապը Ամբրոնն էր, մորեղբայրս Կարոսն էր:
Ես ղեռ մանուկ էի, երբ մահացավ իմ հայրը:
Մայրս ինձ տվեց ազգական արարների,
Որոնք ինձ մեծ սիրով մեծացրեցին,
Նրանք տեսնելով պատերազմում ունեցած իմ հաջողությունները,
Ինձ ամբողջ Ասորիքի կառավարիչ դարձրեցին¹³:

Երկար բանակցություններից հետո աղջկան սիրահարված ամիրան թողնում է ամեն ինչ, գալիս է Կապադոկիա, բրիտանոնություն բնդունում, մկրտությունից հետո ստանում է Հովհաննես անունը, և ամուսնանում աղջկա հետ: Այդ ամուսնությունից ծնվում է մի որդի, որի անունը գնում են Վափլը Քանի որ նա ծնունդն էր հույն մոր և արաբ հոր, կոչվում էր նաև Դիգենիս (երկածին):

Հսկով այդ, ամիրայի մայրը Ասորիքից նամակ է գրում իր որդուն, խնդրելով վերադառնալ Սուհա, որովհետև մյուս ամիրաների կողմից իրեն մահ է սպառնում իր հավատարաց որդու պատճառով: Այդ նամակի բովանդակությունից մենք նոր մանրամասնություններ ենք իմանում ամիրայի ծագման մասին: Նամակում ասվում է, որ ամիրայի հայրը, նշանավոր Խրիստերգը

Բազմաթիվ հոռոմների կոտորեց, գերեվարեց,
Եանտերը լցրեց ստրատեգներով և տոպարիներով,
Ասպատակեց հոռոմների երկրի բազմաթիվ թեմաներ,
Եվ բազմաթիվ ազնվական կանանց գերի բերեց:

⁸ Գրոտտա-Ֆերրատայի տարբերակ, գլ. Ա, 265—267:

⁹ N. Adontz, Les fonds historiques de l'épopée byzantine, էջ 202:

¹⁰ „Les exploits de Digenis Akritas“, épopée byzantine du dixième siècle, publ. par C. Sathas et E. Legrand, 53—58:

¹¹ Տրապիզոնի տարբերակում այն կոչվում Խրիստիսերգ:

¹² Տրապիզոնի տարբերակում՝ Սպաթիա:

¹³ Գրոտտա-Ֆերրատայի տարբերակ, գլ. Ա, 284—290:

Նա շմուրկեց, ինչպես դու, և չդարձավ հավատարաց:
 Երբ նրան շրջապատեցին հոռոմների զորքերը,
 (Վերջիններս) ստրատեգները նրան երդվում էին սարսափելի երդումներ,
 Խե Սաղավորը նրան կշնորհի պատիւի աստիճան,
 Նա կդառնա պրոտոստրատոր, եթե զցի իր թուրը:
 Սակայն նա պահպանելով Մարգարեի պատգամները,
 Արհամարհեց փառքը, հարստությունը,
 Մինչև որ նրան կտոր կտոր արեցին և առին իր թուրը:
 Իսկ դու առանց որևէ պատճառի ամեն ինչ արհամարհեցիր,
 Հավատդ, ազգականներիդ և ինձ, բո մորբո:
 Իմ եղբայրը՝ բո մորեղբայրը Մուրսիս Կարոնը
 Արշավեց մինչև ծովափնյա Ջմյուռնիան,
 Ասպատակեց Անկյուրան, Արիդոս բաղարը,
 Աֆրիկան, Տերենտան և Հերակուսիան,
 Որից հետո միայն վերադարձավ Ասորիք:
 Իսկ դու, ամենաթշվառդ, ման գալու՝ գնացիր,
 Այն ժամանակ, երբ կարող էիր ամբողջ Ասորիքի փառքը դառնալ,
 Ամեն ինչ լքեցիր մի խոզի սիրո համար¹⁴:

Տրապիզոնի տարրերակում Կարոնի ասպատակած բաղարների թվում հիշատակվում է նաև Ակինը (Աχιν), հայոց Ակինը, իսկ էսկուրիալի տարրերակում Կարոնն արշավում է նաև Հայաստան: Այստեղ նշենք, որ Աֆրիկայի տակ ենթադրվում է Տեֆրիկան-Տիվրիկը, պավլիկյանների մայրաքաղաքը, որն արաբական աղբյուրներում կոչվում է Արրիկ (այստեղից էլ՝ վիպերգության Աֆրիկան): Տիվրիկն ու Ակինը իրաջ շատ մոտ էին և գտնվում էին Փոքր Հայքում¹⁵:

Ամիրան վերադառնում է իր մոր մոտ Ուսհա, համոզում նրան բրիստոնեություն ընդունել: Այնուհետև նրանք երկուսով գալիս են Կապադոկիա, ուր ամիրան իր մորը մկրտում է: Սրանից հետո արդեն սկսվում է Դիզենիս Ակրիտասի բաջագործությունների պատմությունը:

Սկզբում Դիզենիսը երեք տարի գրազդուություն է սովորում: Տասներկու տարեկան հասակում առաջին անգամ հոր հետ գնում է որսի և առանց զենքի խեղդամահ է անում երկու արջ, բռնում է մի եղնիկ և պատառոտում, թրի հարվածով կիսում մի առյուծ: Դիզենիսի հայրը այդ տեսնելով առում է, որ այժմ հանգիստ սրտով նրան կարող է ուղարկել թշնամու երկիրը արշավանքների: Այս ժամանակ է, որ Դիզենիսը լսում է երգեր բաջ ապելատնեցի մասին: Ինքը ևս ցանկություն է հայտնում դառնալ ապելատ: Նա գնում է նրանց հավաքատեղին, որը Տրապիզոնի տարրերակում կոչվում է ռասսափելի և անօրինակ ավազականոց: Ապելատների պարագլուխ ծերունի Ֆիլոպապոսը նախ հավաստիանում է այն բանում, որ Դիզենիսը չի դավաճանի իրենց կամ չի մատնի և ապա առում, որ եթե նա ցանկանում է ապելատ դառնալու պատվին արժանանալ, պետք է տասնհինգ օր բաղցած ու անքուն պահակություն անի: Այսպիսով, եթե Դիզենիսը, լսելով ապելատների բաջագործությունների մասին երգերը ցանկանում է ապելատ դառնալ, ապա դա վկայում է, որ ապելատները ոչ միայն ավազակներ էին, այլև բաջության, արիության մարմնավորում:

Դիզենիսն այնուհետև լսում է ստրատեգ Դուկասի դուտեր՝ գեղեցկուհի Սվիդոկիայի մասին և հանդիպում նրա հետ: Վերջինս համաձայնվում է, որ Դիզենիսը իրեն առևանգի: Դիզենիսը կոչվում է ստրատեգի, նրա որդիների և նրանց զորքերի ղեմ, և հաջորդ դուրս գալիս Դրանից հետո աղջկա ընտանիքը համաձայնվում է Սվիդոկիային կնություն տալ հերոսին մեծ օժիտով, որից Դիզենիսը հրաժարվում է, այնուհետև վիպերգության մեջ խոսվում է այն օժիտի մասին, որ ստանում է Դիզենիսը: Հետաքրքրականն այն է, որ օժիտի մեջ էր նաև պարսից արքայից արքա Խոսրովի թուրը: Հարսանիքը տեղում է վեց ամիս, երեք ամիս աղջկա ծնողների տանը, երեք ամիս՝ Դիզենիսի:

Ամուսնությունից հետո հերոսը իր կնոջ հետ առանձնանում է սահմանների վրա: Այնտեղ նա նորից է կոչվում ապելատների հետ, որոնք ցանկանում են առևանգել իր կնոջը և ապա մարտեր մղում արարների դեմ: Դիզենիսի անունը միայն սարսափահար է անում արարներին:

¹⁴ Նույն տեղում, գլ. Բ, 61—82:

¹⁵ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, т. 2, 80:

Գիզենիոսը վերջ տվեց արարների արյունահեղ արշավանքներին և խաղաղություն հաստատվեց ամենուրեք: Այդ միջոցին էլ, որ բյուզանդական կայսր Վասիլը¹⁶ (Վասիլ Ա, 867—886) արշավանքների էր դուրս եկել արարների դեմ: Հսկում Գիզենիոսի բազադործությունների մասին, նա ցանկություն է հայտնում հանդիպելու նրան: Հանդիպումը կայանում է Եփրատի ափին: Գիզենիոսը կայսրին խորհուրդներ է տալիս՝ ողորմած լինել աղբատների հանդեպ, պայքար մղել անարդարության, զրպարտության դեմ: Վասիլ կայսրը նրան պատրիկի աստիճան է շնորհում, և իրավունք տալիս իր վրա վերցնել սանձանների պաշտպանությունը:

«Девгеннево деяние»-ի մեջ սակայն փաստերը բոլորովին այլ կերպ են ներկայացված: Այնտեղ Վասիլ կայսրը, լսելով հերոսի բազադործությունների մասին, հրավիրում է նրան մայրաքաղաք Սակայն Դեփզենին պատասխանում է, որ ինքը հասարակ մարդկանցից է և եթե կայսրը ցանկանում է իրեն տեսնել, ապա թող փոքր գործով դա Եփրատ գետի ափը Այնու-հատե Դեփզենին գրում է նրան, որ չի վախենում ոչ նրանից, ոչ էլ նրա զորքից: Վասիլ կայսրը մեծ զորքով գալիս է Եփրատի ափը, որ գլխավոր պարտության է մատնելում Դեփզենի կողմից և փախուստի դիմում: Դեփզենին հաղթանակից հետո թագավորում է Կոստանդնուպոլսում: Նա ազատություն է տալիս բազմաթիվ գերիների, նրանց թվում նաև Կանամին և Իսակիմին¹⁷, որոնք ոչ այլ որ են, քան հունարեն տարրերակների Կիննամոս և Իսանիկիոս ապեղատները:

Այսպիսով հին ոտսական թարգմանությունը շատ արժեքավոր մանրամասնություններ և տարրերություններ է պարունակում մեզ հասած հունարեն քնագրերի համեմատությամբ:

Գիզենիոս Ակրիտասը քսան տարեկան հասկում սիրահարվում է Մեֆերկեի (Նփրկերտ) ամիրա Ապլորավդիոսի դստերը¹⁸: Այնուհետև նա սպանում է մի երեք գլխանի վիշապ, որը երիտասարդի կերպարանը ստացած ուզում էր գայթակղեցնել իր կնոջը, նորից պայքարի մեջ մտնում ապեղատների հետ, որոնք ծանր պարտություն կրելով դիմում են ամադոսուհի Մարսիմոյի օգնությանը: Վերջինիս առաջին կտրիճը բաժնի Մեկեմենիսին էր: Մեկամարտում Մարսիմոն պարտվում է, իսկ Մեկեմենիսը սպանվում Գիզենիոսի կողմից: Մարսիմոն դեռ ոչ որից չէր պարտվել, ոչ որ նրան չէր տիրացել: Եվ քանի որ նրան հաղթել էր Գիզենիոսը, Մարսիմոն հանձնվեց նրան: Երբ Եփզոկիան, Գիզենիոսի կինը, իմանում է այդ և սկսում նրան պարսավել, Գիզենիոսը սպանում է Մարսիմոյին և այնուհետև որոշում իր բնակատեղին փոխել: Նա գնում է Եփրատի ափը, որ և կառուցում է հրաշալի ապարանք: Վիպերգության մեջ մանրամասն նկարագրվում են ապարանքը, նրա զարդարանքները, խնամկարները և այլն: Որոշ ժամանակ անց նա իմանում է իր հոր մահվան մասին, գնում է Կապադովկիա և վերցնելով հոր աճյունը, բերում իր ապարանքը, որ և թաղում է: Այդ ժամանակ է, որ Գիզենիոսի մայրը որոշում է բնակվել որդու մոտ: Գիզենիոսի երջանկությունը մի քանի է միայն մթափում, այն, որ երեխա չունի: Հոր մահից հինգ տարի անց վախճանվում է նաև Գիզենիոսի մայրը: Վիպերգությունն ավարտվում է Գիզենիոսի մահվան նկարագրությամբ: Մի օր լողանալիս նա մրսում է, ծանր հիվանդանում և մահվան մահճի վրա խնդրում կնոջը, որ իր մահից հետո անպայման ամուսնանա Կինը աղիողորմ լացով նետվում է մահացող Գիզենիոսի վրա և երկուսն էլ հույն օրը, հույն ժամին մահանում են: Նրանց մահվան լուրը տարածվում է ամենուրեք: Նրանց թաղմանն են գալիս խորհրդանշել, Կապադովկիայից, Բազադից, Ամիդից և Վաթի-րիարսից¹⁹ բազմաթիվ մարդիկ: Թաղումը տեղի է ունենում Տրոսիս-0 կաշված վայրից ոչ հեռու:

Ահա համառոտակի Գիզենիոս Ակրիտաս վիպերգության բովանդակությունը, հիմնականում քստ Բրետտա-Ֆերրատայի տարրերակի: Վիպերգության մեջ հիշատակված անձնավորությունների մի մասի պատմականությունը ապացուցվել է ուսումնասիրողների կողմից: Գիզենիոսին որևէ պատմական անձնավորության հետ հույնագիտության փորձերը հաջողություն չեն ունեցել, որովհետև ամենայն հավանականությամբ այդպիսին գոյություն էլ չի ունեցել, նրա մեջ մարմ-

¹⁶ Այս տարրերակներում կայսեր անունը Թոմանոս է:

¹⁷ М. Сперанский, Девгеннево деяние, т. 143—148: Р. Pascal, Le „Digenis“ slave, т. 331—334:

¹⁸ Այս ամիրայի մասին մանրամասն խոսք կլինի ստորև:

¹⁹ Վաթիարիարսը այն վայրն է, որտեղ պատմական աղբյուրների տվյալների համաձայն 872 թ. ճակատամարտ է տեղի ունեցել բյուզանդական զորքերի և պավլիկյանների միջև, և որտեղ սպանվել է խրիստիան, աղանդավորների պարագլուխը:

²⁰ Տրոսիսը հույնացվում է Ստեփանոս Բյուզանդացու Տարսա վայրի հետ, որ գտնվում է Եփրատի մոտ, Սամոսատից արևմուտք, ժամանակակից Տրուշը Թուրքիայում:

նափորվել է քաջությունը, հերոսությունը, արիությունը, Բյուզանդիայի հաջող պայքարը խալիֆաթի դեմ: Ինչ վերաբերում է հրիստոսերգ-հրիստոսերպին, ապա նա ոչ այլ որ է. քան պավլիկյան աղանդավորների ամենանշանավոր ուղղմական ղեկավար հրիստոսերգը, որ սպանվել է 872 թ., այն տարբերությամբ, որ բյուզանդական պատմական սկզբնաղբյուրներում (Թեոփանեսի Շարունակող, Էկենսիոս, Պետրոս Արևիկացի, Փոտ և ուրիշներ) պավլիկյան է, իսկ վիպերգության մեջ՝ արար մահմեդական, շնայած անունը հունական է: Կարոտսը ոչ այլ որ է. քան պատմական Կարրեստը, պավլիկյանների մյուս նշանավոր ղեկավարը, որը վախճանվել է 863 թ.: Ակրիտյան ցիկլի երգերի մեջ Կարոտսը հանդես է գալիս Կարաբիբիս ձևով²¹, որը աղավաղված հայկական Կարապետ անունն է, իսկ վիպերգության Կարոտսն էլ նույն Կարապետ անվան փաղարշական ձևն է՝ Կարոտ: Նույնը կարելի է ասել բյուզանդական ժամանակագիրների մոտ հանդիպող Կարրեստ անվան մասին, որը նույնպես փաղարշական ձևն է Կարապետ անվան՝ Կարպիս²²: Իրականում Կարրեստը հրիստոսերգի անունն էր և միաժամանակ հորեղբայրը, վիպերգության մեջ Կարոտսը հրիստոսերպի կնոջ եղբայրն է: Նշենք, որ բոլոր քաջագործությունները, որ վիպերգության մեջ Կարոտսին և հրիստոսերպին են վերագրվում, միանգամայն հաստատվում են բյուզանդական ժամանակագիրների տվյալներով: Ամբողջը նույնպես հայտնի է, նա այդպես էլ (կամ Ամեր ձևով) հիշատակվում է բյուզանդական ժամանակագրություններում: Նա Մելիտենի ամիրա նշանավոր Օմար-իրն-Արդալլահ ալ-Լեկտան է, վերահիշյալ պավլիկյան ղեկավարների ուղղմական դաշնակիցը՝ Վասիլ Ա կայսեր դեմ մղված պայքարում: Նա սպանվեց 863 թ. Բյուզանդիայի դեմ մղված մարտերից մեկում: Այս առթիվ կարելի է վերհիշել վերևում բազմիցս հիշատակված ապելատներին: Ապելատ-απελατης բառի մասին Կոստանդին Միրանաժինի տված բացատրությունը՝ «անասունների, ձիերի հափշտակի»²³, լրիվ չի տալիս վիպերգության ապելատների իսկական էությունը: Գուցե ապելատների տակ ենթադրվում են պավլիկյան աղանդավորները: Պատահական չէ, որ վիպերգությունը, ընդգծելով նրանց արիությունն ու քաջությունը, ցույց տալով, որ նրանց մասին ժողովրդի մեջ երգեր են երգվում, միաժամանակ նրանց հավաքատեղին ավագականոց է անվանում: Ապելատների բնակության վայրը, ապրելակերպը ևս մեզ իրավունք է տալիս նրանց մեջ աղանդավորներ փնտրելու: IX դարի հեղինակ Պետրոս Արևիկացին պավլիկյանների մասին գրում է, որ նրանք իրենց խայտառակ դարձնելու պատճառով մարդկանց հետ հարաբերությունների մեջ չեն մտնում, և դեռի նման ապրում են անապատներում²⁴: Բայց անհավանական չէ նաև, որ Կոստանդին Միրանաժինի ժամանակ, պավլիկյանների շարժման ճնշումից բաժանված հետո, աղանդավորները որոշ չափով փոխել էին իրենց էությունը:

Ինչ վերաբերում է քաջ ապելատ Մելեմենձիսին, Ն. Ապոնցը նրան նույնացնում է X դարի սկզբում Լիկանդոս թեմայի ստրատեգ զարձած Մելիասի հետ, հայերեն Մլեհ, և ցույց է տալիս, որ Մելեմենձիս անունը հայերեն Մլեհ մեծի (ոսմկ. մենծ) խեղաթյուրված ձևն է²⁵:

Դիզենիսի մոր տոհմը ևս հիշատակվում է բյուզանդական ժամանակագրություններում: Դուկասները հայտնի են որպես նշանավոր բյուզանդական տոհմ: Կիննամագների բյուզանդական իշխանական երեկի տոհմը ծագումով հայկական էր²⁶: Հայկական է նաև Դիզենիսի

²¹ H. Gregoire, Notes sur l'épopée byzantine, Byzantion, t. XIII, 1938, էջ 351:

²² Հ. Աճառյանը գրում է (տե՛ս նրա Հայոց անձնանունների բառարանը, հատ. Բ, էջ 582—583), որ մեր մեջ Կարապետ անունը հանդիպում է ԺԱ դարից: Բյուզանդական վիպերգությունը և ժամանակագրությունները հնարավորություն են տալիս առնվազն երկու դար առաջ տանել ոչ միայն անվան, այլև նրա կրճատ ձևերի թվագրումը:

²³ Constantini Porphyrogeniti de Cerimonils aulae byzantinae, CSHB, Bonnae, 1829, էջ 820—821: Ո՛րչա է, բյուզանդական աղբյուրներում ապելատները հիշատակվում են պավլիկյան շարժման ծագումից շատ առաջ, դեռևս Հուստինիանոս I կայսեր ժամանակ, բայց անհավանական չէ, որ հին անունը հետագայում ստացած լինի նոր բովանդակություն:

²⁴ Petri Siculi Historia utilis et refutatio atque eversio haerescos Manichaeorum qui et Pauliciani dicuntur, Migne, Patrologia graeca. t. 104, cap. IX.

²⁵ Տե՛ս N. Adontz, Les fonds historiques, էջ 216: Նաև H. Grégoire, Melias le Magistre, Byzantion, t. VIII, 1933, էջ 79—88: Նույնի՝ «Ο Διγενής Ἀχρίτας, էջ 117—121:

²⁶ N. Adontz, op. cit., էջ 205: II. Καλονάρος, «Ο Βασίλειος Διγενής Ἀχρίτας», τ. 1, Αθήναι 1941, էջ 36:

կնոջ պապի անունը՝ Մուսելում, որը ոչ այլ ինչ է, քան հայկական Մուշեղ անվան բյուզանդական ձևը²⁷։

Ասորիքի ամիրայի արշավանքների հիմնական վայրը Կապադոկիան էր, հարսիանոն թեման, Ամորիոնը, Իկոնիոնը։ Ահա այս բոլոր վերահիշյալ նկատառումներից ելնելով Ն. Ազոնցը, նրանից հետո նաև հայտնի բելգիական բյուզանդագետ Ա. Դրեզուարը եկան այն եզրակացության, որ բյուզանդական Դիգենիա Ակրիտաս վիպերգությունը ստեղծվել է հայկական միջավայրում, ավելի կոնկրետ՝ պավլիկյանների միջավայրում։ Նրանք որպես հիմք են ունեցել նաև այն հանգամանքը, որ «Девгениево деяние»-ն ընդգծում է վիպերգության թշնամական վերաբերմունքը դեպի Վասիլ Ա կայսրը, պավլիկյան աղանդավորների դիմադրությունը և նշողը²⁸։

Չնայած նրանց այս եզրակացության դեմ հանդես եկան բազմաթիվ բյուզանդագետներ, համենայն դեպս աղանդավորական կնիքի առկայությունը վիպերգության վրա չի կարելի ժխտել։ Բերենք մեկ օրինակ, թվում է, բավական ծանրակշիռ՝ Վիպերգության մեջ, ինչպես նաև նրան որպես սկզբնաղբյուր ծառայած «Արմուրիսի երգում»։ Հանդիպում են արևապաշտության հետքեր։ Ամիրայի առևանգած աղջկա եղբայրները դիմում են արևին, բրպեսզի նա ցույց տա իրենց քրոջ տեղը, նրան են բողոքում, որ նա նախանձից այդպես վարվեց իրենց քրոջ հետ, դիմում են նրան «տեր արև» ասելով։ Արմուրիսի երգում բազմիցս կարելի է հանդիպել հետևյալ երգումին. «Երգվում էմ, սիրելի տեր արևում և նրա սիրելի մորով»։ Հայերեն «Դիրք հերձուածոց» հայտնի սկզբնաղբյուրի մեջ մենք կարդում ենք այն մասին, որ պավլիկյանները «Ջարեգակն Քրիստոս ասէին ոչ մեռեալ և ոչ յարուցեալ»²⁹։ Հովհան Սձեցին նույնպես իր «Ընդդէմ Պաւլիկիանց» ճառում ընդգծում է այդ³⁰։ Նույն բանին կարելի է հանդիպել նաև բյուզանդական սկզբնաղբյուրներում։ Մանիքեցիների դեմ ուղղված ուրացման բանաձևերում, որոնք օգտագործվել են նաև պավլիկյանների դեմ, կարգում ենք հետևյալ բանաձևը. «Նզովում էմ նրանց, ովքեր արևին Քրիստոս են համարում և աղոթում են արևին»³¹։ Մխիթար Գոշի առակներից մեկը նույնպես վկայում է աղանդավորների արևով երգվելու մասին. «Նախատեցաւ եղեգան ծաղիկ և նմանր նորա, պաշտօնեայ լինել արեգական. և նորա ձգեալ զձեռն յարևն երգուաւ արեգական թէ ոչ եմ»³²։

Վերևում մենք տեսանք, որ Դիգենիսը քսան տարեկան հասակում սիրահարվում է Մեֆերկեի ամիրա նշանավոր Ապլորավդիսի դստերը։ Ահա այդ ամիրայի պատմականության հարցի վրա ուզում ենք ստորև ավելի մանրամասն կանգ առնել։

«Դիգենիա Ակրիտաս» բյուզանդական վիպերգության մեջ հիշատակված բազմաթիվ անձնավորություններից մեկն է և ոմն Ապլորավդ-իս («Απλωρᾶδης») Մեֆերկեի (նփրկերտ) ամիրան։ Ապլորավդ-իսի դուստրը, որի կապակցությամբ է հիշատակվում նրա հայրը, ասում է Դիգենիսին.

Իմ հայրենիքը Մեֆերկեն է,

Դու լսե՛լ ես Ապլորավդիսի՝ ամենամեծ ամիրայի մասին,

Նա իմ հայրն է, իսկ մայրս Մելանթիան է³³։

Ապլորավդիսը վիպերգության մեջ հանդես է գալիս որպես անընդհատ պատերազմների մեջ գտնվող անձնավորություն, նա բազմաթիվ երևելի բրիստոնյանների գերության մեջ էր պահում։

Ապլորավդիսի նույնացումը վիպերգությանը ժամանակակից որևէ պատմական անձնավորության հետ հանդիպել է բազմաթիվ զգվարությունների։ Այսպես օրինակ, հույն պատ-

²⁷ Սրա մասին մանրամասն տե՛ս Ն. Adontz, op. cit., էջ 205 և հուր.

²⁸ Ն. Ազոնցը գտնում է, որ Դիգենիա Ակրիտաս վիպերգությունը Բալկաններ փոխադրեցին հայ գաղթականները, որտեղից էլ այն անցավ Ռուսիա։ Տե՛ս նշվ. աշխ., էջ 227։

²⁹ «Դիրք հերձուածոց», հրա. Միաբանի, արտատպ. «Արարատից», 1892, էջ 21։

³⁰ «Յովհաննու Իմաստասիրի Աւանեստի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1953, էջ 50։

³¹ Appendix monumentorum ad recognitiones Clementinas, Migne, Patrologia graeca, t. 1, col. 1465.

³² Մխիթար Գոշ, Առակներ, Երևան, 1954, էջ 68։ Հմտ. Ի. Ա. Орбели, Басни средневековой Армении, Москва—Ленинград, 1956, էջ 23, 70։

³³ Դրոստա-Ֆերրատայի տարրերակ, գլ. Ե, տող 66—68։

մարան Պ. Կարողիգիսը Ապլորավդիսին նույնացնում է Մայաֆարկինի ամիրա Արդուրահիմի հետ³⁴։ Մի ուրիշը՝ Մավրոգորդատոն գտնում է, որ Ապլորավդիսը X դարի 70-ական թվականներին Վարդ Սկլերոսին դաշնակցած *Ἀποταγῆς* — *Abū Taghīb-Արու-Թաղիբին* է³⁵։ Սովետական բյուզանդագետ Ա. Յա. Միրկինը, վերջերս լույս տեսած իր հոդվածում իրավացիորեն այդ նույնացումները համարում է անընդունելի³⁶, բայց նա ոչ մի փորձ չի անում Ապլորավդիսի պատմականությունը որոշելու ուղղությամբ։

Վիպերգուսյան մեջ ասվում է, որ Ապլորավդիսի մոտ գերի էր գտնվում զորավար Անտիոքի երիտասարդ որդին, որին ի վերջո հաջողվում է փախուստի դիմել ամիրայի դստեր հետ միասին։ Վիպերգուսյան մեջ ցույց է տրված նաև, որ այս երիտասարդի հայրը մահանում է գերություն մեջ արաբների մոտ, որոնք վիպերգուսյանում կոչվում են «պարսիկներ»։

Միանգամայն հավանական է, որ վիպերգուսյան մեջ Ապլորավդիսի տակ ենթադրվում է Կոստանդին Միրանաժինի մոտ և հայկական միջնադարյան աղբյուրներում հիշատակված Ապահոնիք դավառի Մանազկերտ բաղարի կայսիկների Ապլվարդ ամիրան։ Վիպերգուսյան մեջ, անկասկած, տառերի տեղափոխությամբ՝ *ἄρχον-ἄρχον*, հույն դրիշը, կամ էլ նրանից առաջ հույն գուսանը ցանկացել է իմաստավորել անունը (մի բան, որ շատ հաճախ է հանդիպում բյուզանդական գրականության մեջ) ... *ἄρχον-ἄρχον* բառից, որ հունարեն նշանակում է գուրգը³⁷։ Վիպերգուսյան մեջ ջանք է թափվել իմաստավորելու նաև արաբական Արու-լ-ը հունարեն *ἀρχὴ* բառի միջոցով։

Ապլորավդիսի նույնացումը Մանազկերտի կայսիկների ամիրա Ապլվարդի հետ ավելի հավանական է դառնում, երբ դիմում ենք վիպերգուսյան էսկուրիալի տարրերակին Այնտեղ Ռոհայի ամիրայի մայրը իմանալով իր որդու հավատափոխության մասին, ազադակում է. «Վայ ինձ, եթե այդ իմանան կասիսները»։ Հույն բյուզանդագետ Պ. Կարողիգիսը իրավացիորեն կասիսների տակ ենթադրում է կայսիկներին³⁸։

Կոստանդին Միրանաժինի մոտ որպես Մանազկերտի ամիրա հիշատակվում են երկու Արու-լ-Վարդ (*Ἀρῆ-Ἀρχῆ*)։ Գլանցից առաջինը նրա տվյալներով իշխում էր IX դարի երրորդ քառորդին։ Իշխանաց իշխան Աշոտը (862—885, թագավոր 885—890 թթ.) որպես տիրույթ նրան տվեց Խլաթը, Արճեշը և Բերկիրին³⁹։ Ահա այն ամենը, ինչ մենք գիտենք այս Արու-լ-Վարդի մասին Կոստանդին Միրանաժինից։ Նրա մասին մանրամասնություններ են տալիս հայկական սկզբնաղբյուրները։ Գրիգոր Նարեկացին (X դար) իր «Վասն կարծեացն անիծելոց թողորակեանց» թղթի մեջ մատնացույց է անում, որ թողորակեցիները, որոնք լայն տարածում էին գտել Ապահոնիքում⁴⁰, կոտորվել են «ի սրոյ վրիժախնդիր հեթանոս ամիրային Ապլվարդայ, որ առգարև գաւազան սրտմութեան ի ձեռին Տեանն Յիսուսի»⁴¹։ Այս Ապլվարդ

³⁴ Π. Καραλίου, Συμπερασματικά στοιχεία ιστορίας και τοπογραφίας εις το μεσαιωνικόν εποχ. Ἐπετηρίς τοῦ Ἐθνικοῦ Πανεπιστημίου, Ἔν Ἀθῆναις, 1906, էջ 242։

³⁵ „Digenes Akrites“, ed. by J. Mavrogordato, էջ 146։

³⁶ А. Я. Сыркин, Об историчности персонажей «Дигениса Акрита», «Византийский Временник», т. XVIII, 1961, էջ 148։

³⁷ Այստեղ տեղին է նշել, որ բյուզանդական բանական հաս զուրգների մի տեսակ, որոնք կոչվում էին *αρχοντα* (վարդուկիա) կամ *ἄρχοντα* (վարդիկիա)։ Այդ մասին տե՛ս N. Καλομενέ-ου-όβλ.σ. «Περὶ τῶν ἀρχόντων ὀρχησάμενος τῆς Ἑλληνικῆς Ἀποταγῆς τοῦ Βυζαντίου», Ἔν Ἀθῆναις, 1937, էջ 133։ Այնպես որ Վարդ անունը բյուզանդացիների մոտ զուգորդվում էր *ἄρχον*—գուրգ բառի հետ ոչ միայն հնչման մոտիկությամբ, այլև իմաստով։

³⁸ Π. Καραλίου, Το επος Διγενῆ Ἀκρίτα κατὰ το χεῖρογραφεὺν Μαδριτῆς ἢ Ἐσθουρίου, Ἐπετηρίς Ἑταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, ετος Γ', (1926), էջ 330։

³⁹ „Constantine Porphyrogenitus de administrando imperio“, ed. by Gy. Moravcsik, Budapest, 1949, էջ 198 (cap. 44)։

⁴⁰ Հենց ինքը Թողորակը Ապահոնիքում էր գտնվում։ Ինչպես պատմում է Արիստակես Հաստիվերացին, թողորակյան շարժման ակահավոր գործիչներից մեկը, ոմն Հակոբոս Լալիսկոսը «զայ անցանէ ի դաւանն Ապահոնեաց ի բնակարան սատանայի, յաստուածուրաց ժողովն և ի գաղանաց գառապիղն, որ կոչի Թողորակս»։ «Պատմութիւն Արիստակիսի Հաստիվերացոյ», Երևան, 1963, էջ 124։

⁴¹ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498։

ամիրան էր, որ ձերբակալում և մահապատժի է ենթարկում թոնդրական շարժման հիմնադիր և պարագլուխ Սմրատ Զարեհավանցուն⁴², պալիկիան շարժման խոշորագույն ղեկավարներ Կարբեսասի և Խրիսոխիի ժամանակակցին:

Այս Ապլվարդի մասին պատմում է նաև Թովմա Արծրունին, որը հիշատակում է նրան IX դարի 70-ական թվականների դեպքերի կապակցությամբ. «Ապլվարա (մի ուրիշ տեղում Արլբառ) Կայսիկ Ապահունեաց ղռնաւորն»⁴³:

Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակված կայսիկները պատկանում էին Մանազկերտի Սուլայմ ամիրայական տանը, և IX դարի 60-ական թվականներին Ապահունիքի տերն էին: Նրանք ամենայն հավանականությամբ հաստատվել էին Հայաստանում Հարուն-ալ-Ռաշիդ խալիֆայի ժամանակ VIII դարի վերջում⁴⁴: Կայսիկների տիրույթները (Կոստանդին Միրանա-ծինի տվյալներով՝ Մանազկերտը, Բերկրին, Խլաթը, Արճեշը) մինչև Աշոտ Ա-ի իշխանությունը գտնվում էին խալիֆայի տիրապետության ներքո, որը Միրանածինի մոտ Պարսկաստան է կոչվում (Περσικ): Նշված բոլոր ամրոցներն ու քաղաքները վասալական կախում ունեին Աշոտ Ա-ից: Հայոց Սմրատ Ա թագավորի սպանությունից հետո (914), Ապահունիքի կայսիկները դարձան Բյուզանդիայի վասալները, վճարելով նրան որոշ հարկ, այնքան ժամանակ, մինչև որ Միրանածինի ժամանակակից Աբու-լ-Վարդ Երկրորդը դադարեց ենթարկվել Բյուզանդիային:

Նթե ելնենք Կոստանդին Միրանածինի տվյալներից, Հայաստանի կառավարիչները գտնվում էին վասալական կախման մեջ Բյուզանդիայից, իսկ կայսիկ ամիրաները իրենց հերթին հանդիսանում էին հայ կառավարիչների վասալները: Հետևաբար, ամիրայի պայքարը հայոց իշխանի դեմ միաժամանակ պետք է պայքար համարվեր Բյուզանդիայի դեմ: Թովմա Արծրունին գրում է այն պայքարի մասին, որ մղում էին հայ Բագրատունիները Ապահունիքի ամիրաների դեմ: Թովման հիշատակում է նաև, որ Ապլվարդի՝ Ապահունիքի կայսիկ ամիրայի տրամադրության տակ կար «պարսիկ» զորք, որ ասպատակություններ էր կատարում Բյուզանդիայի տերիտորիայի վրա. «Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն զիւր ցօրսն առ ինքն գումարեալ և շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս»⁴⁵: Դիգենիս Ակրիտաս վիպերգության մեջ ցույց է տրված, որ «մեծ ամիրա Ապլորավդիսը» մեծ զորքով ավարառում է Բյուզանդիայի շրջանները:

Երկրորդ Ապլվարդը ապրում էր Կոստանդին Միրանածինի ժամանակ: Նրա մասին վերջինս տալիս է ավելի մանրամասն տեղեկություններ: Նա ցույց է տալիս, որ այս Ապլվարդը սպանում է Խլաթ, Արճեշ և Արծկե ամրոցների տեր, նույնպես կայսիկ, բայց Բյուզանդիային ենթակա ամիրա Ախմետին, վերամիավորում կայսիկ տոհմին պատկանող բոլոր հողերը և դադարում է ենթարկվել Բյուզանդիային: Միրանածինը խորհուրդ է տալիս իր որդուն անպայման տիրել այդ ամրոցներին, նաև Բերկրին, որովհետև եթե դրանք Բյուզանդիայի ձեռքում լինեն, արաբական զորքը (Περσικον φορταγον) չի կարող մուտք գործել Բյուզանդիա, բանի որ այդ ամրոցները փակում են նրա ճանապարհը: Այստեղ պետք է ընդգծել, որ Միրանածինը (ինչպես տեսանք նաև Թովմա Արծրունին՝ Ապլվարդ Առաջինի կապակցությամբ) տվյալ դեպքում ոչ մի կասկած չհարուցող արարներին անվանում է «պարսիկներ», իսկ արաբական խալիֆաթը՝ «Պարսկաստան»: Դիգենիս Ակրիտաս վիպերգության մեջ նույնպես ասվում է, որ Անտիոք ստրատեգը գերի ընկնելով սպանվեց «պարսիկների», այսինքն՝ արաբների կողմից և միանգամայն ճիշտ է Ա. Յա. Սիրկինը, երբ գտնում է, որ Ապլորավդիսի դստեր դեպքը տեղի է ունենում արաբական միջավայրում⁴⁶:

Այս ամրոցը պատմության մեջ մի հարց է ծագում: Զե՞ որ վիպերգության մեջ Ապլորավդիսը Մեֆերկեի-Նփրկերտի ամիրան է, մինչդեռ երկու Աբու-լ-Վարդերն էլ եղել են Մանազկերտի ամիրաները: Բայց վիպերգության մեջ այս տիպի սխալները շատ շատ են, և դա չպետք

⁴² Այդ մասին մանրամասն տե՛ս Աշոտ Հովհաննիսյանի հոդվածը. «Սմրատ Զարեհավանցին, նրա ժամանակն ու ժամանակակիցները», «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956:

⁴³ «Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 353:

⁴⁴ Ոգտվում եմ Ա. Տեր-Ղևոնդյանի «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» մենագրության ձեռագրից:

⁴⁵ Թովմա Արծրունի, էջ 395:

⁴⁶ А. Я. Сыркин, Об историчности персонажей «Дигениса Акрита», էջ 149:

է մեզ շփոթեցնի: Այստեղ կարելի է նշել, որ Արու-լ-Վարդ Երկրորդին պարտության մատնողն ու սպանողը Աղձնիքի (կենտրոնն էր Մայաֆարկինը՝ Նփրկերտը) ամիրա Սայֆ ալ-Դաուլայի զորավար Նաջան էր⁴⁷:

Ավելի դժվար է մի այլ հարցին պատասխան տալը. Ապլորավդիսին այս երկու Արու-լ-Վարդերից ո՞ր մեկի հետ պետք է նույնացնել, առաջին թե՞ երկրորդ: Գուցե Ապլորավդիսի մեջ են մարմնավորված երկուսն էլ, մի բան, որ հաճախ է պատահում վիպերգություններում, երբ իրականության մեջ նույն անունով տարբեր անձնավորություններ գոյություն ունեն: Համեմատելով դեպքս ավելի հավանական է Ապլորավդիսին նույնացնել առաջին Արու-լ-Վարդի, պավլիկյան դեկավարներ Կարրեասի և Խրիստիսի ժամանակակցի հետ:

Ինչպես նշեցինք, բյուզանդական «Դիդակխս Ակրիտաս» վիպերգությունը հայագիտությանը րիչ է ծանոթ. դրա հիմնական պատճառը այն է, որ վիպերգությունը թարգմանված չէ հայերեն: Այդ իսկ պատճառով հայագիտության համար մեծ նշանակություն ունի բյուզանդական վիպերգության բոլոր տարբերակների հայերեն թարգմանությունը: Դա, կրկնում ենք, կլայնացնի մեր պատմության ու գրականության ուսումնասիրության աղբյուրների շրջանակները և հատկապես նոր լույս կսփռի «Սառունցի Դավիթ» էպոսի պատմական ատաղձի կարևոր հարցեր լուսարանության վրա:

ВИЗАНТИЙСКИЙ ЭПОС О ДИГЕНИСЕ АКРИТЕ И ЕГО ЗНАЧЕНИЕ ДЛЯ АРМЕНОВЕДЕНИЯ

Р. М. БАРТИКЯН

(Р е з ю м е)

В 1875 г. византиноведами К. Сафой и Э. Леграном был впервые издан эпос о герое Дигенисе Акрите, сохранившийся в одной трапезунтской рукописи XVI в. С этого времени византиноведами началась оживленная и очень кропотливая работа над эпосом, над вопросами, касающимися времени его создания, историчности упомянутых в нем персонажей, его значения для изучения византийской истории и литературы, его связей с другими эпосами средневековья и т. д. Одновременно усиленно шла работа над обнаружением других рукописей, содержащих эпос. До сих пор найдено и опубликовано пять стихотворных и одна прозаическая версии эпоса о Дигенисе Акрите. Древнейшая из них — Гротта-Ферратская версия (XIV в.). Эпос отражает эпоху византийско-арабских столкновений в IX—X вв.

Больше чем три десятилетия тому назад крупный арменовед и византиновед Н. Адонц впервые доказал, что византийский эпос был создан на территории Западной Армении и именно в среде армянских еретиков-павликиан, крупнейшие вожди которых — Карбеас и Хрисохир — играют большую роль в эпосе и являются родственниками главного героя эпоса Дигениса Акрита по отцовской линии. Дигенис Акрит и по материнской линии является армянином по происхождению; его мать происходила из известного византийского рода Киннамадов, армянского по происхождению. Н. Адонц убедительно доказал армянское происхождение и других персонажей эпоса и нашел много общего между византийским эпосом и армянским эпосом о Давиде Сасунском.

В 1939 г. со статьей, посвященной связи византийского и армянского эпосов, выступила А. В. Банк.

Несмотря на все это, эпос о Дигенисе Акрите остался не затронутым всеми остальными арменоведами, и это главным образом из-за отсутствия его армянского перевода. Глубокое, серьезное изучение византийского эпоса арменоведами пролило бы свет на историю и литературу армянского народа. Анализ содержания византийского эпоса дает новые факты, свидетельствующие о том, что эпос создан в еретической среде. Что касается историчности эмира Аплоравда, упомянутого в эпосе и до сих пор не нашедшего своего исторического первообраза, есть факты, доказывающие, что он тождествен с эмиром г. Маназкерта Абу-ль Вардом I, современником Карбеаса и Хрисохира.

⁴⁷ M. Canard, Recueil des textes relatifs a Sayf al-Daula, Paris, 1934, 42 240—251, 256—257: